Արձանագրություն N 4

«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/15-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան

«04» նոյեմբեր 2019թ.
ժամը 15:00

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Շահբազյան,
Սիրանուշ Գևորգյան
Անուշ Բախշյան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Թեոֆարմա»ՍՊԸ-ն, «Վերիտաս»ՍՊԸ-ն և «Ֆրեզեն»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.1. Ընտրված մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերում կային որոշ անճշտություններ, որոնք մասնակիցները շտկել են սահմանված ժամկետում:Առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.3. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/15-2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները «Թեոֆարմա»ՍՊԸ-ի, «Վերիտաս»ՍՊԸ-ի և «Ֆրեզեն»ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

3. «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ- 19/15-2» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/15-2» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում.

- № 1 չափաբաժնի համար «Թեոֆարմա»ՍՊԸ-ին,
- № 2,3,4,6 և 7 չափաբաժինների համար «Ֆրեզեն» ՍՊԸ-ին,
- № 5 չափաբաժնի համար «Վերիտաս»ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Թեոֆարմա»ՍՊԸ-ին, «Վերիտաս»ՍՊԸ-ին և «Ֆրեզեն»ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը № 1 և № 5 չափաբաժինների համար սահմանել անգործության ժամկետ 5 օրացույցային օր:

4.3. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը № 2; 3; 4; 6 և 7 չափաբաժինների համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

Հանձնաժողովի անդամներ՝ ---------- Արմեն Շահբազյան

---------- Սիրանուշ Գևորգյան

---------- Անուշ Բախշյան

Քարտուղար՝ ---------- Սահականուշ Գրիգորյան